ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2022թ. № 293

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՌԵՐԻ ԷՏՄԱՆ,ԾԱՌԱՏՆԿՄԱՆ ԵՎ ՓՈՍԱԼՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, գյուղատնտեսության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Հենրիկ Իգիթխանյանի, Սպիտակի համայնքապետարնի քաղաքաշինության, գյուղատնտեսության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետի ժ/պ Վազգեն Գևորգյանի 2022 թվականի ապրիլի 15-ի թերությունների ակտը, Սպիտակ համայնքի ծառերի էտման, ծառատնկման և փոսալցման աշխատանքներ իրականացնելու և անհրաժեշտ ապրանքները ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Ճանապարհային տնտեսություն» գործառական դասակարգման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման 5129 հոդվածից հատկացնել 170 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 293
ք.Սպիտակ